

ՄԱՆԿ

Տարեկան դինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանից համարատան մէջ:
Ոտորագրողները սխմում են ուղղակի:
Тифлис. Редакция «Манук»

Խմբագրատունը ըստ է ստանդարտի 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տոն օրերից):
Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար, զննարկում են
իրարանկար բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ խմբագիր ժիճակը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Արաքսաբերդ: Ներքին Լուրեր: —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ֆրանսիա: Թիւրքիա: Արտաքին Լուրեր: —ՀԵՌԱՅԻՐՆԵՐ: —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՐՈՒՄ ԲԵՔ:

ՀԱՅ ԽՄԲԱԳՐԻ ՎԻՃԱԿԸ

Մենք 1880 թիւին, ինչպէս ընթերցողը կը տեսնի «Մշակի» ներկայ համարի ներքին լուրերէն, մեր լրագրի այլ և այլ քաղաքների բաժանորդների վրա մնացին ապառիկներ աւելի քան 1200 ռուբլ գումարի: Այդ ձեւով, ի հարկէ, շատ դժուար է, կանանք, մինչև անգամ անհնարին է իր սեփական կարողութիւնը չունեցող Հայ խմբագրի համար հրատարակել մի հայոց թերթ: Բաւական չէ որ Հայ հասարակութիւնը չէ պահպանում իր համար աշխատող, չարչարվող խմբագրին, բայց նոյն հասարակութիւնը այն աստիճան անամբարձ է, որ ստիպում է իր համար անվարձ աշխատող, հասարակական և ազգային հարցերը մշակող խմբագրին իր գրպանից վճարել այն փողերը, որոնց չէ

վճարում նոյն լրագիրը կարգացող հասարակութիւնը:

Այդ տեսակ անճոռնի երեւոյթ դեռ աշխարհիս երեսին ոչ մի երկրում, ոչ մի ազգի մէջ տեսնուած չէ: Բաւական չէ որ հայերը չեն գրվում այնքան, որ լրագիրը դէֆիցիտ չունենայ, բայց նրանք էլ, որոնք գրվում են, նրանք էլ չեն վճարում:

Մենք այս անգամ հրատարակում ենք մեր ներքին լուրերում թւանշաններ թէ ինչ քաղաքներում ինչքան մարդիկ մեզ պարտ մնացին անցեալ տարվայ ընթացքում:

Բայց եթէ երեք, չորս ամսվայ ընթացքում, մի խօսքով մինչև յուրիս ամիսը, այդ ապառիկները մեզ չը վճարվեն, մենք ստիպված կը լինենք հրատարակել մեր լրագրի էջերում մեզ պարտ մնացած բոլոր պարտների անուններն ու ազգանունները:

Մանաւանդ ամենից աւելի իրանց անամբարձութեամբ, մենք ուրիշ խօսք չենք գտնում այդ տեսակ վարմունքը անուանելու համար, —յայտնվեցան երեք քաղաքներ. Նրւան, որտեղ 41 մարդ չը վճարեցին, Թիֆլիս,

որտեղ 24 հոգի մեզ պարտ մնացին և Նոր-Նախիջևանի որտեղ 9 մարդ չը վճարեցին իրանց բաժանորդագիրը:

Խմբագիրը ժողովրդական ուսուցիչ է, նա իրաւունք կունենար իր սարսափելի աշխատանքի համար վարձատրութիւն պահանջել, ինչպէս իր աշխատանքի համար վարձատրութիւն է ստանում ամենայն աշխատող ազգականը, բժիշկը, կոշիկակարը, պաշտօնեան, ուսուցիչը, դերասանը, արուեստագետը, մշակը, դատաւորը, զինուորականը, պօլիցիականը, դերձիկը, գործակատաւորը...

Բայց խմբագիրը պատրաստ է վարձատրութիւն չը ստանալ, միայն թէ ստիպված չը լինի անդադար իր գրպանից փող տալ ժողովրդը լուսաւորելու համար: Իսկ Հայ հասարակութիւնն ասում է նրան, «դու կամենում ես մեզ լուսաւորել, ուրեմն ինքդ վճարիր մեզ, ինքդ քո գրպանից տուր, որ մենք կարգանք լրագիրդ ու լուսաւորվենք»:

Ի՞նչ կասէք այն ծնողներին, որոնք հրաւիրելով մի ուսուցիչ իրանց զաւակների համար, ա-

մէին ուսուցչին. «դուք պէտք է դաս տաք մեր երեխաներին, բայց մենք ձեր աշխատանքի համար չենք վճարի ձեզ, այլ, ընդհանրապէս, դուք պէտք է ձեր գրպանից փող տաք մեզ, որպէս զի մեր երեխաներին դաստիարակէք»:

Նրեւի դուք խելագար կը համարէիք այդ տեսակ ծնողներին, խելագար կը համարէիք այն ուսուցչին, որ յանձն կառնէր դասատւութիւն անել այդ տեսակ պայմաններով:

Իսկ Հայ խմբագիրը այդ դուրս թեան մէջ է: Այս հասարակութիւնը խելագար չէ համարվում:

Չրի աշխատիր, քո գրպանից էլ ծածկիր թերթը պահպանելու վրա եղած տարեկան դէֆիցիտը, վճարիր նրանց համար, որոնք գրվեցին, բայց բաժանորդագիր չեն տալիս, —և այդ բոլորը բաւական չէ, որպէս վարձատրութիւն ընդունիր անընդհատ Հայ-հայանք, զբաւարտութիւններ, բամբաստանք, մատնութիւններ հասարակութեան ամենակեղտոտ մասից, նրա մտաւոր առաջնորդները, նրա ինտելիգենցիայից, նրա

ԴԱՆՈՒԹ ԲԵՔ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Ե Պ

(1722—1728)

Թ.

Մրցութիւնները պիտի կատարվեն ճախից յետոյ, այդ պատճառով մեծ պարտքը չտարցրեց, որ ճախը չուտ պարտատոմս:

—Տղերք, դարձաւ նա դէպի թաւաղի որդիները, —դուք էլ օգնեցէք:

Դաշտային խոհանոցը շատ հեռու չէր նրանց նստած տեղից: Դրսում, բաց օդի տակ, ճաշ պատրաստելը վրացու համար, թէ աղտոտական լինէր նա և թէ հասարակ գիւղացի, ամենամեծ դուրսնութիւններից մէկն է: Ոչինչ այնքան բաւականութիւն չէ պատճառում վրացուն, որպէս իր ձեռքով եփելը և իր ձեռքով ուտելը: Թաւաղի որդիները, ձեռքները մինչև արմուգները լաւած, վաղեցին դէպի խոհանոցը, լանը սեղանի սփռոցը խելով, բերեց, տարածեց գորգերի վրա, յետոյ վաղեց, լաւաշների աճապին կապոցը գրկելով, բերեց շարեց սեղանի շուրջը: Մեծ պարտի ժառանգը կանաչեղենները տարած և սկսեց լուսնաւ մերձակայ աղբիւրի մէջ. այդ պատճառով էր նրա մօրը չափաւորեց ուրախութիւն, ու իր որդին էլ մի բանով գրաւված է: Արջիւր խորովածի շամբուրները սկսեց դարձել կրակի վրա, անդադար այս սպասաւորին, այն աղախանին ուշուցներ տալով, թէ միսը մանր են կտորել: Չաքարան խաչաւայ միսը կամրաններից դուրս էր տալիս, լցնում էր պղնձէ պնակների մէջ, և մի կողմից էլ ինքը ճաշակելով, բարձր ձայնով բացականցում էր. «Ա՛խ, քո հոգուն մա-

տաղ, ինչ լաւ եփվել է... Այլքսին մեծ պարտի ժառանգը երբա՞մ գինիները լցնում էր լիտրաների մէջ, նախապէս ինքը բուրբի համը առնելով և ամեն մէկի յատկութիւնները առանձին-առանձին գովասանելով: Մէկ ուրիշը բոլոր ձայնով գոռում էր. «Այդ որտեղ է, ձեր տունը չը քանդվի, աղ չը կայ, աղը մոռացել են շանորդները...»

Սպասաւորները, աղախիները, որոնք առաջ գալուստին խոհանոցի մօտ աշխատում էին, նկատելով, որ այդ գրաւմունքը բաւականութիւն է պատճառում իրանց տէրերին, ամենայն խնայողութեամբ թողնում էին շատ պատրաստութիւններ նրանց կատարելու: Այդ տեսակով թաւաղի որդիների տիկիները, նրանց քեթիչ քոյրիկները, իրանք էլ նախանձկեցան, սկսեցին միւս կողմից այս և այն սպասաւորութիւնը կատարել: Մի բողբոս բոլոր սեղանակիցները ոտքի վրա կանգնելով, վերջապէս էր մաքրում: Պառաւ իշխանութիւնը, վերջապէս էր երկար ու ձիգ խօսակցութիւնը թամարի խորթ մօր հետ, անդադար հարցնում էր մեծ պարտից, շատա՞յ խորթ վաճը լաւ է որ տան, թէ խաչաւայ: Բայց երկուսն էլ մի վճռական եղբայրացութեան չէին հասնում, որովհետեւ կարծիքները երբեմն թեքվում էին խորովածի կողմը, իսկ երբեմն խաչաւայի կողմը: Թամարի խորթ մայրը պանիլ էր դարձում փոքրիկ նալաքիներին մէջ: Անգործ չը մնաց և մեծ պարտին տիրուէին. այդ վերջին էլ, որպէս զի մի բանով գրաւված լինի, գերիաթի փէշերը վեր քաշած, նստած տեղում սօս էր կտորում, ինչի համար, —ինքն էլ չը գիտէր:

Մի քանի բողբոս մէջ սեղանը պատրաստ էր: Գինու լիտրաները շարված էին նրա շուրջը: Լաւաշները վրա դրված էին խորովածի կողմը. պղնձէ պնակներին մէջ լցված էր եփված խաչաւայ: Այնուհետ կար մեծ քանակութեամբ կարմիր

ծու, որը գտակի յիշատակը պահպանելու համար դեռ մոռացված չէր. այնտեղ կար խաչած ձուկ, որ չըբակալքի ձկնորսները ընծայ էին բերել մեծ պարտին:

—Ո՛ր են օրդորները, ոչ մէկը չէ երեւում, իր շուրջը նայելով, հարցրեց տիրուէին:

—Նրեւի, գնացել են դրսեւելու, պատասխանեց պառաւ. իշխանութիւնը. —նրանց հասակում մինք էլ էինք մոռանում հացն ու գինին և շուտ սեղանի մօտ չէինք գալիս:

—Տղերք, այժմ նստեցէք, ձայն տուց մեծ պարտը. —խորովածը սառչում է:

Թաւաղի որդիները շարվեցան սեղանի շուրջը ինչպէս որ պատահեց. նրանց հետ խառն նստեցին և տիկիները: Նրանք վեր էին առնում միսը, և հում կանաչեղենների հետ փաթաթելով լաւաշի մէջ, ուտում էին: Կարծես այդ հասարակութիւնը դեռ գտնվում էր մարդկային կենցաղավարութեան այն շրջանի մէջ, երբ մարդը դեռ չէ մոռացել խոտ ուտելը, իսկ նոր է սովորում եփած մսի գործածութիւնը:

—Չեղ օ ո լ ու ռ ա շ ի ընտրեցէք, ասաց մեծ պարտը:

—Արջիւր, Արջիւր... բարով կատաւարէք, Արջիւր, աղաղակեցին ամեն կողմից, լցնելով իրանց եղջիւրները:

Կանանց հասարակութիւնը բողբոսը Արջիւր ընտրութեան դէմ, որովհետեւ նա սաստիկ խիստ էր և ձայն տուց լանի ընտրութեան մասին: Վիճաբանութիւնը տեղի մի քանի բողբոս, վերջապէս Արջիւր ձայնների մեծամասնութիւնը ստացաւ: Այդ սաստիկ վրաւորեց պառաւ իշխանութեան, որը ցանկանում էր լանիին տօլուբաշի տեսակ: Տօլուբաշին սեղանի միակողմէն էր բողբոս ձաշակը, բողբոս տիրութեան կախված է նրա կամայականութիւնից:

—Սպասաւորները թող գան, հրամայեց տօլուբաշին:

Սպասաւորները վաղեցին նուազածունքին կանչելու, և քանի բողբոս յետոյ դուռնալինքի, նաղարալինքի խումը պատրաստ էր սեղանի մօտ:

—Գէ, մի լաւ քօրդլի անէք, հրամայեց տօլուբաշին:

Նուազածունքը սկսեցին անել քօրդլու և դանակով: Սպասաւորների հետաքրքիր բազմութիւնը, լսելով դուռնալի ձայնը, ամեն կողմից մօտ վաղեցին, և նստելով խոտերի, քարերի վրա, սկսեցին խորին հոգեզաւթութեամբ լսել և մեծ բաւականութեամբ թամաշա անել, թէ որպէս էին դուռնալու երկրի տէրերը:

Իշխանական սեղանից փոքր ինչ հեռու, մատուռի շուրջը, այստեղ և այնտեղ, մերկ գետնի վրա նստած էին հասարակ մահաւանդներ և իրանց գերդաստանի հետ վայելում էին իրանց աղքատիկ ձայնը: Նրանք ուրախ էին այնքանով եւ, որ գոնէ հեռուից լսում են մեծ պարտի դուռնալի ձայնը:

Իսկ տօլուբաշին խիստ վերեկ սկսեց կենաց բաժանիլ: Նախ հրամայեց խմել Աստուծոյ կենացը, յետոյ Յիսուսի կենացը, յետոյ Քրիստոսի կենացը (նա Յիսուս Քրիստոսին առանձին-առանձին անձնաւորութիւններ էր համարում): զրանցից յետոյ հրամայեց խմել մեծ պարտի կենացը: Նուազածունքը դեռ շարունակում էին քօրդլու եղանակով:

—Նղջիւրները լցրէք, հրամայեց տօլուբաշին: Բողբոսը հնազանդվեցան նրա հրամանին:

—Այդ էլ խմում ենք մեր տիրուէն կենացը, բայց սպասեցէք, մեծ պարտը պիտի պարգայ: —Համեցէք, դարձաւ նա դէպի մեծ պարտը:

Բողբոսը, եղջիւրները ձեռքներին բռնած, սպասում էին: Մեծ պարտին թէն փոքր ինչ անվայել էր բազմութեան առջև պար դալ, բայց ինչ պէտք էր անել. տօլուբաշի հրամանն էր,

բարձր ուսում ստացած կինոս- ներից:

Ահա հայ խմբագրի վիճակը: Ահա միակ դամբանական ճա- ուր, որ կարելի կը լինի կարգալ հայ խմբագրի դադարի վրա, երբ նա մեռած կը լինի:

Քանի որ աշխատող մարդը կենդանի է, մենք ամեն միջոց ենք գործ դնում, որ արգելենք նրա գործունեութեանը, որ ան- հնարին դարձնենք նրա գործու- նեութեան շարունակելը, — իսկ երբ կը մեռնի՝ եկեղեցիներում հոգեհանգիստներ կը կատարենք նրա յիշատակին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՅԻԱՔԱՆԱԿԻՑ

Փետրվարի 28-ին

Բարեկենդանի հինգշաբթի օրը Վարդանանց տօնը այստեղ կատարեցին բազմաթիւ կեր- պով: Ներկա ուսումնարանների աշակերտու- թիւնը և աշակերտները համարաշին երգասացութեամբ փառաւորում էին հանդէսը: Դադարի վրա հո- գեհանգիստը կատարելու միջոցին արժ. Ս. քահ. Կէմբրոնցիանց մի ազգու քարոզ ասեց. (նա մեր եկեղեցու զարդն է, նա միայն արժանաւոր քա- հանայ է):

Այդ օրը ուսումնարանի վարդապետը, ու- սումնարանի դահլիճում պատրաստել էր աշակեր- տուհիւնների ձեռագործները վիճակաբաշխ համար: Պատարագից յետոյ բոլոր բաղնիքները երկու սնունդ բաղնիքներ լքեցինք: Ուսումնարանի դահ- լիճը: Իր ներկայութեամբ սրբազան Գրիգոր արք- եպիսկոպոս Սաղիսեանցը պատուեց այդ ընկե- րութիւնը և մի համառօտ խրատ խօսեց, որի բովանդակութիւնն էր որ անպատճառ պէտք է բացանել երկսեռ ուսումնարանների մօտ արհես- տագործական ուսումնարաններ և որ ինքն աշ- խատներ խնայելու չէ այդ գործի աշխուրդը: Յանկանում ենք աշխուրդիս հայր սրբազանին: Նրանից յետոյ ճառարանիցին Տէր-Սարգսիանց, Ն-

պէտք էր կատարել, ուր մնաց, որ խմբում էր նրա թանգազին տիրուհու կենացը: Նա վեր- կացաւ:

— Եկեղեցւոր անցեցք, հրամայեց տօլուբաշին նուագաձուներին:

Նրանք սկսեցին լեկզկաբար անել: Բազմու- թիւնը այժմ աւելի մօտեցաւ իշխանական սե- ղանին: Ամեն կողմից ամբողջ վրա էր թափվում:

Եթէ տուրք դրեք տալիս է մեզ մի հետաքրքրի օրինակ, թէ ինչպէս Գառնի, Խորաշէլի մարգա- րէն և թագաւորը, ներշնչված մի սրբազան ոգեւորութեամբ, պար էր գալիս տապանակ ուխտի առջև, — ոչ սակաւ հետաքրքրի էր տես- նել, թէ ինչպէս վրաց երկրի տէրն ու իշխանը, Կախեթու գինու ազդեցութեան ներքոյ, սկսեց իր պարը: Հագարաւոր ձեռքեր ծախ էին տալիս, բազմաթիւ զուռնաներ և նաղարաներ որոտում էին: Այդ միջոցին սեղանակից տիկիններն էլ վեր առին իրանց մօտ դրած դալիբաններն ու թմբուկները, սկսեցին անել: Նուագարանների հնչիւնների հետ միախառնվում էին և հիացած բազմութեան խառնածայն աղաղակները, կազմե- լով խիստ անախրժ, վայրենի ներդաշնակու- թիւն:

— Բաւական է, հրամայեց տօլուբաշին:

Նուագարանները դադարեցին, և մեծ պարոնը բոլորին գլուխ տալով, նստեց իր տեղը: Գինու եղջիւրների դատարկվեցան:

Տիրուհու կենացը խմբուց յետոյ տօլուբաշին հրամայեց խմել ժառանգի կենացը: Այժմ պիտի պար դար նրա մայրը: Տիրուհին յայտնի էր որ- պէս լաւ պար եկող: Նրան սկսեց, նրա հետ ամուսնացաւ մեծ պարոնը միայն նրա լաւ պար գալու համար, թէ և այժմ մարմնի չափազանց ծանրութիւնը արգելում էր նրան առաջվայ թեթեւ պոռոյաները գործել իր պարի մէջ, Այսուամե- նային, տիրուհին այս անգամ ևս դարմայրեց բոլորին իր հիանալի պարով:

Ղազարեանց և Պիճիկեանց, Առաջին երկուսի բու- վանդակութիւնը զլիսաւորապէս երեխաների դա- տիարակութեան մասին էր, իսկ երրորդինը նկա- րագրում էր Մամիկոնեանների ծագումը և ան- քեալը: Հնորհակալութիւն այդ պարոններին: Սը- կովեցաւ վիճակաբաշխը:

Թէ գործող և թէ մասնակցողների անձամբ լինելու մասին վիճակաբաշխ հետ (պէտք է ասել որ Ախալքալաքում այդ վիճակաբաշխ առաջին անգամն էր), բաւական անկանոնութիւն եղաւ, բայց ոչինչ ամենքն էլ կընտելանան այդ գործին: Գահլիճում, պատի վրա, չըջանալի մէջ առած անմահ «Վարդանի» պատկերը ծաղիկներով դար- դարված էր և վարդերով չըջանալի բոլորը զրկած էտօն Վարդանանց:

Մեր հրապարակական շնորհակալութիւնը յայ- անում ենք մեծ. տիկին Վարդանանցին, որը ամբողջ Ժաման օր զինքն և ցերեկ անխնայ աշխա- տում էր վիճակաբաշխ պատրաստութեան վրա: Մենք յայտ ունենք որ պատեւի հոգաբարձու- թիւնը անտես չի առնի նրա աշխատութիւնները: Վիճակաբաշխ յօգուտ երկսեռ ուսումնարան- ների էր, և զուտ արդիւնք գոյացաւ 200 բուրդ: Այդ երեկոյեան, ինչպէս ամենայն տարի սո- վորութիւն ունի, արժ. Խորէն ա. քահ. Բարսե- ղեանց, մի քանի բարեկամներով տօնեց իր տօ- նախմբութիւնը: Այդտեղ սեղանի վրա պ. Կ. Մաղաքեանցի առաջարկութեամբ հրաւիրեցին նախկինում են 12 բուրդ յօգուտ «Միացեալ ընկե- րութեան». նոյն միջոցին սրբ. Սաղիսեանցը ա- ռաջարկում է ներկայ եղող երիտասարդներին շարքի երեկոյեան անպատճառ մի ներկայա- ցումն առ: Նրանք խոստանում են և 24 ժամ- վայ մէջ պատրաստում և ներկայացնում են «Բըռ- նի ամուսնութիւն», «Վոյքի իմ վեչեր» և «Քաղ- ցածներ»: Ներկայացումը բաւական յաջող անցաւ, դահլիճը բոլորովին լի էր, շատ խնդրողներ տոմ- սակ չէին կարող ձայնել: Տեղերը գնեցը սովորա- կանից շատ պակաս էին նշանակված: Ներկայա- ցումը յօգուտ բեմի էր և զուտ արդիւնք մնաց, ինչպէս լուռն ենք, 90 բուրդ:

Ականատես

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Ֆինլանդիայի կառավարութիւնը վճել է առա- ջարկել կենտրոնական ուսուցիչ կառավարու- թեանը հաւասարեցնել Ֆինլանդիայի մէջ եղած կրտսերական և բնակական գինեւորանքի իրա- տ-

Նուագաձուները շարունակում էին անել դա- նազան եղանակներով: Կենացների հերթը հետե- ձեռն անցնում էր սեղանակիցների մէկից մի- ւրին: Տօլուբաշին ոչ մէկի չխաթրեց չէր կոտ- րում: Իւրաքանչիւր կենացը խմելու ժամա- նակ հրամայում էր անել և ստիպում էր սեղանա- կիցներից մէկին կամ պար դալ կամ երգել: Այս- պէս թաւազի որդիները համ ուտում էին, համ խմում էին, համ երգում էին, համ պար էին գա- լիս: Այդ չէր արգելում նրանց երբեմն վերելի- նալ նստած տեղից, վազել դէպի դաշտային խո- հանոցը, կրակի վրայից վեր առնել խորովածի երկու տաք շամբուրներ, և երկու ձեռքով բըռ- նած, ուրախ-ուրախ բերել, և բոլորին թաւա- ղալ՝ անելով, ասել:

— Համեցէք, համեցէք, ի՜նչ լաւն է...

Միւսները ձեռքները մեկնում էին, շամբու- րից դուրս էին քաշում խորովածը, և արհիւրը ու իւրը կաթկաթկելով, դնում էին իրանց բե- րանները, ասելով:

— Փահ, փահ, փահ... շատ լաւն է, շատ լաւը...

Թէ այդ և թէ կին գտանվում էին անասանան բերկրութեան մէջ: Նրանց մէջ դադարել էլ մը- տաւորը, այժմ գործում էր միայն գրգռված զգացմունքը: Տօլուբաշին արդէն վերջացրած լի- նելով բոլորի կենացները խմելը, այժմ իրա- ռունք տուեց սեղանակիցներին իրանց ընտրու- թեամբ առաջարկել նոր կենացներ: Այդ կենաց- ների ժամանակ, — որ կամաւոր էին, որ զուրկ էին պաշտօնական բնաւորութիւնից, — սովորու- թիւն կար, այն անձը, որի կենացը խմվում էր, պարտաւոր էր «պաշտի» անել բոլորի հետ: Այդպիսի բաժաններ խմվում էին ըստ մեծի մա- սին գեղեցիկ սեռի կենացը:

— Իւրեք կնիկները թող իմ տալիս ընտրել, բայց իմ կնիկները, ասաց տօլուբաշին ծիծաղե- լով:

Մեղանիան կարմրեց: Նրա ամուսին այդի հա-

ւունքները և թող տալ որ երկու տեսակ գինեւ- օրաների ուսումնասիրող աշակերտները անխնայ- քաբար ընդունվին համալսարանների բոլոր ֆա- կուլտետներում:

Անցեալ 1880 թւին «Մշակի» բաժանորդները վրա մնացին մեծ ապագիւններ: Ահա քաղաքնե- րի վրա բաժանելով, իւրաքանչիւր քաղաքում ինչքան մարդ չէին վճարել մեր խմբագրութեանը թէ ամբողջ տարով և թէ մի քանիսները կէս տարով: Ախալքալա 4 մարդ չէին վճարել, Ալէք- անդրապոլ 7 մարդ, Ատրաշիւս 2, Աղդաշ 1 (6 բուրդ), Բաղու 4 (որոնցից մէկը 6 բուրդ, իսկ մնացածները տաս տաս բուրդ), Նոր-Բաշա- ղեան 1, Վաղարշապատ 1, Գօրի 1 (5 բուրդ), Գեղուսի 1 (7 բուրդ), Գանձակ 3, Եկո- տերիսոցար 1, Երևան 41 (որոնցից երկուս 6 բուրդ), Իգդիր 1, Կարս 1, Կաղման 1 (5 բուրդ), Մոսկովա 2, Նոր-Նախիջևան 9, Հին-Նախիջևան 1, Օրդուբազմ 1, Օրդուս 1, Պրոսկովէյ 1, Սա- րատով 1, Սարիկամիշ 1, Թէլաւ 1, Խարկով 1, Հուշի 2 (որոնցից մին 6 բուրդ) և վերջապէս Թիֆլիս 24 հոգի: Ընդամենը 1200 բուրդ դու- մարից աւելի ապագիւ: Եթէ պարոնները չը վճարեն մեզ մինչև այս տարվայ յուլիս ամիսը, մենք կը տպագրենք մեզ պարտ մնացող բոլոր այդ պարոնների անուններն ու ազգանունները «Մշակի» էջերում:

Վ.Ա.Ս.Ր.Ս.Պ.Ս.Տ.Յ.Յ մեզ գրում են: «Մանկու- նու բարեկամները այստեղ լուր են տարածել, որ իւր թէ Տիգրանակերտի առաջնորդ Փիլիպ- պոս Կալիկոպոսը թէ՛ լուրջ էր ձեռն ուղեցել է եղել մոտեց վեհարան կաթողիկոսի մօտ, բայց Մանկունին չէ թողել: Այդպիսի զրպարտութեամբ կամենում են Մանկունին ու նրա արքանակ- ները արգարացնել այն կամայականութիւնը, որին ենթարկվեցաւ Փիլիպպոս Կալիկոպոսը:»

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ մեզ գրում են որ Արշակ Պապա- խանով անունով մի անձն, որ քարտուղար է եղել Ներսիսի նախնադական կառավարութեան պաշտօնատան մէջ, կեղծ ձեռագիրներ և անցա- գիրներ է շինել, որպէս զի վաճառի հիւպատոս կամարականի անունով 200 պօլուսիպէրիալ ոսկի տոնայի և փախելի դէպի Թիւրքիա: Պա- պախանով այժմ բանտարկված է և հարցաքննու- թեանը ենթարկված:

Մի հաւաքարցի պարոն գրում է մեզ: «Հաւա-

նաքը թեւոյրեց մեծ պարոնին առաջարկել հէնց նախ գեղեցիկ Մեղանայի կենացը: Նա լիքը բաժակը ձեռն, շնորհալի կերպով վեր կացաւ, և բոլորի հետ «պաշտի» անելուց յե- տոյ, գլուխ տուեց և ապա խմեց:

— Այդ Աստուած կը վեր առնի, որ իմ կնոջը իմ աչքի առջև համբուրում են, ասում էր տօ- լուբաշին, ձեռքերը դէպի երկինք բարձրացնե- լով: — Եկ, Մեղանայ ջան, մօտ եկ, քո հոգուն մա- տաղ, եկ ես էլ համբուրեմ, աղաչում էր նա իր տիկնոջը: Բայց տիկինը չը մօտեցաւ նրան, ան- վայել համարելով հրապարակաւ իր ամուսնի հետ համբուրելը:

— Տեսնում էք, ի՜նչ «թարս» բաներ են այդ կնիկները, ասում էր տօլուբաշին, այժմ ձեռ- քերը իր ծնկների վրա խփելով: — հրապարակաւ ուրիշների հետ կը համբուրվեն, բայց իրանց ա- մուսնի հետ ամօթ ի՞նչ համարեն:

Բոլորը ձեռնադրեցին:

Այդ միջոցին Նան թաւաղի որդին, իր չուր- ջը աչք անելով, որոտում էր թամարին: Նա մը- տածում էր առաջարկել նրա կենացը, որ դրա- նով աւելի ունենայ իր վաղուց ցանկացած համ- բուրը քաղել նրա սիրուն շրթունքից: Բայց թա- մարը չերեցաւ: Երբորդները գնե ոչ մէկը չէր վերադարձել դրօսանքից: Նա առաջարկեց պա- ռաւ իշխանուհու կենացը, որը խիստ գունդա- կութեամբ վեր բարձրացաւ իր տեղից և սկսեց իր չուր ու ցամաք շրթունքը կպցնել բազմա- կանների շրթունքներին: Երբ մօտեցաւ նա տօ- լուբաշին, վերջինս ծիծաղելով ասեց:

— Եթէ մի «խերով» բան լինէր, ի՜նչ մօտ չէրի դալ:

Մինչ այստեղ երկրի պետերը զուարճանում էին, մինչ դուռնան և նաղարան որոտում էր, ուսումնարանների բաղնիքներն մէջ, պարկա- պղուկը թեթիւ տակը դրած, զանազոյ քայլերով չըջում էր ծոցովը բազմա բանաստեղծը: Ամենի

լաբարի յետ մնացած վիճակին նպատուում է այդ թաղի մէջ դանդաղան վարչական հիմնարկու- թիւնների բացակայութիւնը: Միակ հաշտարար դատարանը, IV բաժինը, գտնվում է համարեա վաճառի եկեղեցու մօտ, Սաղի մի խուլ անկիւ- նում, որտեղ պէտք է անանցնելի ցեղերին եր- թեկեն հաւաքարի հեռաւոր բնակիչները: Այդ տեղը գուցէ միայն պ. դատաւորի համար յար- մարութիւն ունի, որի բնակարանը հեռու չէ գտնվում դատարանից, իսկ բնակիչները համար շատ անարմար է:»

Քաղաքային դուռնայի անցեալ նիստերից մէկի մէջ, երբ քննվում էր փողոցների մաքրութեան համար նշանակված 57,000 բուրդու ծախսը, ճար- տարախօս պ. Եվանգուլով Սօլջակի պէս փո- ղոցներում պակասութիւն գտնելով, առաջար- կում էր, որ ձմեռ ժամանակ ամեն բողէ կան- գնեն մարդիկ և շարունակ մաքրեն շուտ շուտ ստեղծ ճանապարհները և տրոտուարները, որ- պէս զի չը վայր ընկնեն նրա պէս քնքոյչ անց- ուղիները և իրանց թանգազին դուռը չը կտորեն: Օրինակելի պաշտպանութիւն քաղաքային ինտե- րէսներին... Թիֆլիսի հարկատու ժողովրդի կե- ցած հարկը, որ քուչաներում սարափելի ցե- խից անցնել չէ լինում, իսկ ձմեռը հողէ կտուր- ներից քերված ձիւնը թէրթուրելու հերձ է դարձ- նում ճանապարհները, — և այս մասին մի ձայն էլ չէ լսվում դուռնայում: Բայց Սօլջակի արիս- տօկրատական մասի ճարտարախօսը պահանջում է, որ իր կեցած փողոցները պաշտպան դահ- լիճի նմանվեն, երևի շուտով պ. Եվանգուլով կը պահանջի քաղաքային նախահաշի մէջ մոց- նել մի քանի հազար բուրդ Սօլջակի քուչանե- րը Պարուկաստանի խաշիաներով ծածկելու:

«Порядок» ցրագրի մէջ կարդում ենք հետե-ւեալը. «Կ. Պոլսի մեր թղթակիցը նորերումն հաղորդեց, որ Բ. Գուրը չափազանց աշխատում է բաժանել թիւրքիապատակ հայերին ուսում- հպատակներից և այդ նպատակով հանդուս է նրանց չը ձանաչել Էջմիածնի կաթողիկոսի հոգե-ւոր իշխանութիւնը և իրանց սեփական կաթո-ղիկոս ունենալ Սիսի մէջ: «ԻՅԱԿԱՅ» ցրագրը հաստատում է Բ. Գրան այդ ձգտումները, մի քանի տեղեկութիւններ հաղորդելով Կ. Պոլսի մէջ հրապարակվող թիւրքաց ցրագրերից, ո-րոնք բացարձակ յայտնում են, թէ անհրաժեշտ է բաժանել թիւրքաց Հայաստանը ուսուցիչ Հա-յաստանից կրօնական կողմից: Հայ ազգասեր-

մօտ ածում էր նա, ամենի մօտ երգում էր, և ամեն տեղ նրան տալիս էին կամ մի պատառ հաց, կամ սե փող: Նա իր շրջանը կտտարելով, մօտեցաւ իշխանական սեղանին, և որպէս մարմ- նացած բողոք, սկսեց երգել:

«Ճըտիկ, ճըտիկ, նախշուն փետրիկ, մեծացիր, «Բեզ կուտ կը տամ, շուտ մեծացիր, չաղացիր, «Նրբ գըզլըր տուրքը կուզէ տարեկան, «Բեզ պարոնին ընծայ կը տամ պատուական:

«Հորթիկ, հորթիկ, նախշուն մորթիկ, մեծացիր, «Բեզ կուտ կը տամ, շուտ մեծացիր, չաղացիր, «Նրբ գըզլըր տուրքը կուզէ տարեկան, «Բեզ պարոնին ընծայ կը տամ պատուական:

«Աղջիկ, աղջիկ, սիրուն աղջիկ, մեծացիր, «Բեզ հաց կը տամ, շուտ մեծացիր, չաղացիր, «Նրբ գըզլըր տուրքը կուզէ տարեկան, «Բեզ պարոնին ընծայ կը տամ պատուական:

«Եղիկ, եղիկ, իմ քաջ եղիկ, աշխատիր, «Վարը վարիք, ցանքը ցանիր, կալ կախիր, «Նրբ գըզլըր տուրքը կուզէ տարեկան, «Նս պարոնին ընծայ կը տամ պատուական:

«Կնիկ, կնիկ, սիրուն կնիկ, աշխատիր, «Մանը մանիր, կարը կարիր, շուտ պաճիր, «Նրբ գըզլըր տուրքը կուզէ տարեկան, «Նս պարոնին ընծայ կը տամ պատուական:

«Ատղիկ, ատղիկ, փայլուն ատղիկ, խաւարիր, «Ինձ քուզ մօտ տար, այս կեանքից աղաւթիր, «Շատ գործեցիր, վատասկեցայ, յոգնեցայ, «Իսկ պարոնին գոհացնել ևս չը կրցայ:»

Նա աստուցեց իր երգը: Բայց ոչ ոք նրա վրա ուշադրութիւն չը դարձրեց: Նրա քնարի տխուր հնչիւնները խրատան, անհետացան գուարճաւոր աղնուականների ընդհանուր աղմուկի մէջ...

(Կը շարունակուի)

ները, էջմիածնի ամբողջ բոլոր հայ ժողովուրդի բարոյական կենտրոն համարելով, անհանգիստ են լինում ապագայ այդ անմիաբանութեան պատճառով և ցանկանում են, որ ուստաց զիպ-լոմատիան միջամտէ այդ գործին։

«Helsingfors Dagblad» լրագիրը հաղորդում է, որ ֆինլանդական զօրքի և զինուորական մի-նիստրութեան մէջ Պետերբուրգում վարչական յարաբերութիւնների մասին հարցը վճռված է այն մտքով, որ զինուորական մինիստրութեան մէջ ֆինլանդիայի հաշուով կը իրականացնեն ֆինլանդական բաժին, որի զինուորը ազգով ֆինլանդացի կը լինի և յարաբերութիւն կու-նենայ ուղղակի մինիստրի հետ։

«Полосъ» լրագիրը հաղորդում է, որ Վարչա-վայում կառնաւորված է Մոսկովայից եկած մէկ մարդ, որը բանկային գրասենեակներից մէկում փոխանակելով 40,000 ռուբլու արժէթիթեր, որ նա գողացել էր Մոսկովայում Բանկային գրա-սենեակում ուղարկութեան դարձրին վերոյիշեալ պարտի կապիտալի վարձուների վրա և մի քա-նի նախադրույթներն արեցին, որի շնորհով պոլիցիային աջողվեցաւ կառնաւորել կապի-տալի պարտի կապիտալը կայարաններից մէկում։

«Порядокъ» լրագիրը հաղորդում է, որ ներ-կայ 1881 թւին համալսարանների պահպանու-թեան համար նշանակված է անցեալ տարվանից 6,070 ռուբլով պակաս գումար, այսինքն 2,476,893 ռուբլու խոշորագույն ուսումնարան-ների պահպանութեան համար նշանակված է 1,684,792 ռուբլու, անցեալ տարվանից 72,517 ռուբլով աւելի։ Պոսթմոստներ և ուսուցիչներ պատրաստելու և գիտական զանազան ձեռնար-կութեանց համար նշանակված է 108,120 ռուբլու 5,308 ռուբլով պակաս քան անցեալ տարի։ Գի-տութեանց ակադեմիաների պահպանութեան հա-մար նշանակված է 277,360 ռուբլու, անցեալ տար-վանից 5,870 ռուբլով աւելի։

«Русск. Вѣд.» լրագիրը կազանից հեռագրում են, որ ուսանողների ընդհանուր ժողովում բո-լոր ուսանողները միաձայն հրաժարվեցին ըն-դունել կազանի նահանգապետ պ. Սկարեստինի ձեռքից այն 6,000 ռուբլու, որ հաւաքել է հասա-րակութիւնը հրաժարեցրած նահանգապետին ճաշ տալու համար։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Լրագիրները հաղորդում են հետեւեալ տեղեկութիւնները։ Ֆրանսիական քաղաքա-կան նշանաւոր հարցը վերջին ժամանակ-ներում կազմում է պատգամաւորներին ցուցակներով ընտրելու ձեւը։ Այդ հարցը, որի զինուոր պաշտպանը Գամբետտա է և որ առաջարկվեց պատգամաւոր Բարդուից, գրաւեց Ֆրանսիայի քաղաքական բոլոր կու-սակցութիւնների ուղարկութիւնը։ Եթէ այդ օրինագիծը չընդունվի, ամենքը յայտ-ված կը համարեն հանրապետականների արժանաւոր առաջնորդ Գամբետտային Օրի-նադրի անաջողութիւնը շատ հաւանական է, որովհետեւ նրան քննող մասնաժողովի մեծամասնութիւնը բաղկացած է նրա հա-կաւորներներից։

Գամբետտայի «République Française» լրագիրը բոլոր միջոցներով աշխատում է սպառնացնել, որ մինչև այժմ գործածվող ընտրութիւնների եղանակը գաւառների հա-մեմատ փնտաւար է հանրապետութեան շահերի համար։ Այդ եղանակը ընդունված է 1875 թւին հանրապետութեան թշնա-միներից և այդ իրողութիւնը արդէն ակն-եւր է անում ընտրութիւնների այդ եղա-նակի անպիտանութիւնը։ Ֆրանսիայի հա-մար Բացի այդ լրագիրը հետեւեալ դատո-ղութիւններ է անում։ Բնաւորութիւնները գաւառների համեմատ, գարնեցեանով տե-ղական երեւելիների փառասիրութիւնը, ան-

միաբանութիւն են սերմանում մինչև անգամ ամենաանշան քաղաքների և գիւղերի մէջ, իսկ այդ անմիաբանութիւնները բոլորովին նման չեն քաղաքական կուսակցութիւնների պատուաւոր կուսին։ Ընտրողական այդ ձեւը փնտաւար է պատգամաւորի արժանաւորու-թեանը, որովհետեւ նա ստիպված է լինում ունեւոր միջնորդել կառավարութեան առաջ իր ընտրողների շահերի համար։ Նա փնտաւար է տեղական վարչութիւններին, որովհետեւ պատգամաւորների ընտրողական շահերը արդէն են գնում մինիստրների ազատ կարգադրութիւններին։ Այդ ձեւը պարլամենտական հաստատ մեծամասնու-թիւն չէ տալիս և անկարելի է դարձնում պարլամենտական կանոնաւոր կառավարու-թիւնը։ Բացի այդ ընտրութիւնների ձեւը գաւառների համեմատ արգելում է, որ ընտրիչները իրանց պատգամաւորներին ըն-տրելու ժամանակ միատեսակ իրաւունքներ ունենան, այնպէս որ Ֆրանսիայի մի կէսը ընտրում է 317 պատգամաւոր, իսկ միւս կէսը միայն 209։ Պատգամաւորների ժողովի մի կէսը ներկայացնում է 22 միլիոն ֆրանս-սիացիներին, իսկ միւս կէսը միայն 14 մի-լիոն։

Քաղաքական այդ հարցի վախճանը չա-փազանց հետաքրքրում է ամբողջ եւրո-պայի և մանաւանդ Գերմանիային, որով-հետեւ եթէ ընդունվի ընտրութիւնների եղանակը ցուցակների համեմատ, Գերմա-նիային առեւի Գամբետտա կարող է մի քա-նի գաւառների մէջ ընտրվել և այդպիսով նա մեծ դժուր կը ստանայ Այդ պատճառով Գերմանիան չէ ցանկանում, որ ընտրու-թիւնների նոր ձեւը ընդունվի ֆրանսիական պատգամաւորների ժողովից։

ԹԻՒՐԿԻԱ

Այս միջոցիս Հայաստանի գաւառներէն Պատրիարքարան հասած տեղեկութիւնը ծանրակշիւ են։

Պայագիտի և Պաշանդի կողմերը տեղա-կան կառավարութիւնը կապիտալ աջօք սկսած է նայել Հայ ժողովուրդեան վրայ և զգուշութեան խիստ միջոցներ ի գործ դնել։ Այս տարապարտ կապիտալիստի զէմ նոյն գաւառաց ժողովուրդները բողոքած լինելով, վարչական խորհուրդն երէկ գումարեցաւ Ամեն Սրբազան Պատրիարք Հօր նախա-դասութեան ներքեւ, իրաց այս վիճակը լրջաբար ուղարկութեան առաւ, և լսելով այն տնօրէնութիւնները՝ զորս արդէն Ամեն Ս. Պատրիարքը փութացել էր ի գործ դնել, ինք ալ քանի մ'ընդհանուր տնօրէ-նութիւններ ըրաւ թէ՛ այս անփառհասութեան և թէ՛ հետեւանք եղող խոսու-թեանց նկատմամբ։

Վարչութեան ըրած տնօրէնութեանց վրայ դեռ չը կրցնէր տեղեկութիւն մը քաղել. սա-կայն կը յուսամք որ իրենց նպատակին պի-տի ծառայեն, մանաւանդ մեր այս յոյան աւելի հաստատութիւն կը գտնէ, երբ կ'իմանամք որ արդէն Բ. Գուրը խոստա-ցած է պէտք եղած անմիջական տնօրէնու-թիւններն ընել, և իրաց այս վիճակին վերջ տալ։

Սթամպուլ լրագիրը կը ծանուցանէ թէ մայրաքաղաքի թաղերուն մէջ գումարում են ու բանաստեղծութիւններ անել արգելող Բ. Գրան հրամանագիրն Բունաց Պատրիար-քարան ալ գնացած է։

ձերիտէի Հովատիւ լրագիրն իր այս աւուր թիւով կը ծանուցանէ թէ այս տա-րի հրատարակուած Հայկական Օրացոյցներն չին Հայաստանի թագաւորութեան, անկա-

խութեան, զինուորական զօրութեան և այլ մանրամասնութեանց վրայ տեղեկութիւն-ներ և խորհրդածութիւններ պարունա-կելուն պատճառաւ, հասարակային կրթու-թեան պաշտօնատան առաջարկին վրայ, Առաջին նախարարն հրաման գրելու է Պոլսոյ քաղաքապետութեան և նահանգաց կառավարչներուն, որ այդ Օրացոյցներուն շրջաբերութիւնն արգելուի։

Երէկ Ս. Պատրիարք հայրն առաջին նա-խարար Բարձր Սպիտ փաշային գնաց, և երկարօրէն տեսակցելով, ժամանակէ մ'ի վեր թէ մայրաքաղաքի և թէ գաւառաց մէջ պաշտօնէնց ոմանց կողմէ ցոյց տրուած բռնաւ եռանդին և կայսերական կառավա-րութեան կամաց հակառակ տեղի ունե-ցած զեղծմանց վրայ ընդհանուր ազգին զգացած ցաւալի տպաւորութիւնը յայտնե-լով, յանուն ազգին բողոքեց այն անփառ-հասութեան ցոյցներուն զէմ, որք մերթ ընդ մերթ կը հրատարակին և բարեմիտ հասա-րակութիւնը կը քայլադնէին։

Ս. Պատրիարքն յայտնել է թէ հայոց ազգը բնաւ երբեք Օսմանեան պետութեան զէմ անհաւատարմութիւն ցուցած և Օս-մանեան կառավարութեան բաժանուելու իղձ ունեցած չէ։ Այլ իւր փափաքն ու խնդիրքն եղած է և պիտի լինի միշտ իւր յարմար և ժամանակին պահանջած բարենորոգմանց մասին եղած խոստմանց գործադրութիւնը, բարենորոգմանը, որք ոչ միայն մասնաւորապէս հայոց, այլ նոյն բնակալից եղող քրիստոնեայ և ոչ-քրիստոնեայ ժողովուրդը վիճակին բար-ւոքման և կանոնաւորութեան համար հար-կաւոր են։

Բարձր առաջին նախարարը վստահ-ցուցել է Վ. Պատրիարքը թէ խոստացեալ բարենորոգմանը երկու երեք ամսուան մի-ջոցի մէջ պիտի գործադրվին, և յայնժամ փորձով ցոյց պիտի տրուի թէ կայսերական կառավարութիւնն երբեք կապիտալ չէ հայոց ազգին հաւատարմութեան վրայ, և խոստացել է պէտք եղած ազդու հրա-մանները տալ որպէս զի օրինաց գործա-դրութեան չափազանց եռանդէ ծագած անտեղութիւնը անյուսկապ դադրին։

(Կապիտալ)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լրագիրները մէջ կարգում են հետեւեալը։ Այսօր Ֆրանսիական պատգամաւորների ժողո-վում քննվում էր Բ ա մ օ ի առաջարկութիւնը XII թւի օրէնքը ջնջելու մասին, որի զօրու-թեամբ բոլոր դատաւորութիւնները պարտաւոր են ունենալ իրանց առաջին գերեզմանոցները Բ օ ի է ն խիստ կեղծով պարտաւոր էր այս ա-ռաջարկութիւնը, որպէս կ'օրէնքաւորեն հակա-ռակ։ Հետախօսը պահանջում էր, որ այլադա-ւանների համար առանձին տեղեր նշանակվին ամեն գերեզմանոցներում։ Ե պ ի ս կ ո պ ո ս Ֆ ր է պ է Լ է հաւատում, որ Բամբի առաջար-կութիւնը նպատակ ունենար կրօնական ազա-տութիւնը և դէպի կրօնը ունեցած յարգանքը պաշտպանել։ Գերեզմանների խառնելը, կալիս-կիւղոսի խառնելը, կը իւրեք կաթոլիկական և եկեղեցու իրաւունքները և անհամբերողութեան ու հալածանքի նշան կը դառնար։ (Չար կողմի վրա աղաղակ)։ Կաթոլիկների աչքում, գերեզմանոցը եկեղեցու չարանակութիւնն է, նա հանգուցեալ-ների տաճարն է, նա օծված է, նա սուրբ է։ XII թւի օրէնքը չէր իրաւորում մի քանի մեծ քաղաքներում (օր. Փարիզում)։ Ըստ այդ դեռ չէ նշանակում, որ կաթոլիկ համայնքները եր-բեք չը պէտք է գործ դնեն այդ օրէնքը։ Գե-րեզմանոցների չեղարկութիւնը հակառակում է կաթոլիկ եկեղեցու վարդապետութեանը, այդ առաջարկութիւնը դէպի եկեղեցին ունեցած թշնամութեան նշան է։ (Չարախօսը պատա-րաններ)։ Այս բողոքականները և ոչ հրեաները

XII թւի օրէնքի դէմ չեն. այդ բոլոր աղաւոր-ազատ մտածողներն են զոյգը։ Չարմանալ է, թէ իրանք ինչպէս չեն վրդովւում այն բանի դէմ, որ նրանց կը թաղեն կաթոլիկների մէջ։ Ականալ գերեզմանոցները սրբապղծել, եկեղեցիներին էլ կը համեն, որոնց մէջ ճերմով կաղօթին կաթոլիկ-ները, բողոքականները, մասունքներ և ազատ մտածողները։ (Աղմուկ)։ Անհրաժեշտ է երկիրը նախազգուշացնել այս բանի դէմ։ Բ ա մ օ պա-տաւորանեց, որ իր առաջարկութիւնը բոլորովին թշնամական չէ կաթոլիկ եկեղեցուն։ Ընդհակա-ռակը, նա ցանկանում է ծառայութիւն անել նրան։ Թէպէտ կաթոլիկ եկեղեցին տիրապետող է Ֆրանսիայում, բայց ճանաչված միւս եկեղե-ցիներն ևս պետութեան կողմից հաւասար հովանա-ւորութիւնը պէտք է վայելեն։ Գերեզմանոցները զանազան եկեղեցիների մէջ չեն բաժանվում, այլ ամբողջապէս պատկանում են կաթոլիկ ե-կեղեցուն և արքայորոշում են նրանց, բացի մի անկիւնից, որը անթիվում է և նշանակում է պաշտպաններին, անհասարակներին և պատ-վածներին թաղելու համար։ Այս անկիւնը ամ-թալի նշանակութիւն ունի։ Այն ինչ գերեզմա-նոցները միայն կաթոլիկներին չեն պատկանում, այլ բոլոր համայնքին։ Հաւասար մի քանի օրինակներ բերեց, որոնք վկայում են, որ մի-չե անգամ Փարիզի մերձակայ չրջակայքում բո-ղոքականներին արգելում են ընդհանուր գերեզ-մանոցում թաղել, և պահանջում էր, որ այս գերեզմաններին վերջ դրվի։ Նրա առաջարկու-թիւնը ընդունվեցաւ 348 ձայների առաւելու-թեամբ 126-ի դէմ։

«Բէյլետի» ընկերութիւնը Թէրանից հեռա-գրում են մարտի 11-ից հետեւեալը։ «Քիւրդերը հանգիստ են։ Պարսից հետակ զօրքի ինն գուն-դեր զետեղված են Ուրմիայի և խոյի մէջ. ութ գունդեր գնացին Սուլեյմանի և Սալեհիայէրը պաշտպանելու համար։ Այժմ չեն կարծում, որ քրդերի նոր ապստամբութիւն կարող է լինել։

Լրագիրները հաղորդում են, որ Գիլի քաղաքային խորհուրդը, չնեան դէպարտամեն-տում, մեծեց վերոյիշեալ քաղաքի հասարակա-կան հրապարակներից մէկի վրա կանգնեցնել կամիլ Գէմալէին արձանը, որը ծնվել է Գիլիում մարտի 2-ին, 1760 թւին։

Խաղական լրագիրները հաղորդում են, որ Հոսմում գերմանացի նկարիչների մէկ զգա-րուկական հանդէս է բացված գերմանական դեսպանութեան մէջ, Հանդիսում դուրս են բեր-ված հարիւր պատկերներ և 30 քանդակագոր-ծութիւններ։

Փարիզից հաղորդում են մարտի 9-ից, որ այդ օրը բոլորովին այրվեց «Au Printemps» յայտնի առաջին մագաղկները Միայն կատան կարողացան պատել։ Հարեան չինութիւնները նոյնպէս ազատված են։

«ՄՇԱԿԻ» ՀՆՈԱԳԻՐՆԵՐ

Մ Ի Ե Ա Զ Գ Ա Ե Ի Ե Զ Ե Կ Ե Բ Ո Ւ Թ Ե Ն Ի Ե

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 10 մարտի։ Ս. Պետեր-բուրգի քաղաքապետ նշանակված է Կօլ-նայի նահանգապետ Բարանով։ Ս. Պետեր-բուրգի համալսարանի ուսանողները խնդ-րեցին ընկերակցի աղատել նրանց մի քանի ընկերներից, որոնք քաղաքական կողմից անբարեմիտ են։ Բազմաթիւ գիւղացիներ դային են Ս. Պետերբուրգ Ազատող-Փազա-ւորին վերջին հրաժարական ողջոյն տա-լու համար։ Գատաւատներ Ռիսակովի և միւս չարագործների մասին կը կայանայ մօտաւորապէս մարտի 20-ին։ Ամեն օր չարագործներ են կառնաւորվում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 10 մարտի։ Պետական բանկի 50% տոմսով արժէ 95 ռ. 75 կ., երկրորդ 92 ռ. 62 կ., երրորդ 93 ռ. 50 կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմ-սակը արժէ 221 ռ. 75 կ., երկրորդ 214 ռ., արեւելեան առաջին փոխառութեան տոմ-սակը արժէ 91 ռ. 75 կ., երկրորդ 91 ռ. 75 կ., երրորդ 91 ռ. 87 կ., ոսկի 7 ռ. 98 կ.։ Ռուսաց 1 ռուբլ 1օնգոնի վրա արժէ 24,62 պէնա, Ամստրդամի վրա 125,12 պէնա, Ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 211 մարկ, Փարիզի վրա 261 ֆր-րանկ 25 ստեմին։

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.